<<Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության
ազգային կենտրոն>> ՓԲԸ
ք. Երևան Ֆանարջյան փ. 76 շ.

02/05/2018թ.
Ժամը 11:00 թիվ՝ 2

Արձանագրություն
<ՈՒԱԿ-ԲՄԱՊՁԲ-18/27> ծածկագրով գնման ընթացակարգի
գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի
Հանձնաժողովի նիստին մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ
/դեղատ. վարիչ/ ԳՊ/ԳԱՊ Ն. Գասպարյան
Հանձնաժողովի անդամներ
/հաշվապահ/ ԳՊ/ԳԱ Ն. Դավթյան
/դեղագործ/ ԳՊ/ԳԱ Ս. Անանյան
/գլխ. հաշվապահ/ ԳՊ/ԲԱ Շ.Անանյան
/դեղագործ/ԳՊ/ԲԱ Ա. Դանիելյան
Հանձնաժողովի քարտուղար՝
ԳՊ/Միմ Հարություն Օհանյան

ՀՀ կառավարության 04 մայիսի 2017 թվականի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի /այսուհետև՝ Կարգ/ 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, գնահատող հանձնաժողովի նիստը համարվում է իրավազոր և հայտարարվում է բացված

1. Հայտերի բացման մասին

Հանձնաժողովի նախագահ՝ Ն. Գասպարյան

1. **Ընդունել ի գիտություն որ՝**

1.1 Գնման ընթացակարգի հրավերը, 19/03/2018թ. հրապարակվել է www.armeps.am համակարգում և տեղեկագրում:

Գնումների մասին ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն հայտերի բացման նիստը նշանակված էր գնման ընթացակարգի հայտարարության և հրավերի հրապարակման օրվանից հաշված 42-րդ օրը ժամը 11:00-ին (2018թ.-ի ապրիլի 30-ի ժամը 11:00-ին):

ՀՀ կառավարության 12 ապրիլի 2018 թվականի N 409-Ն որոշման համաձայն 2018 թվականի ապրիլի 30-ի աշխատանքային օրը տեղափոխել 2018 թվականի մայիսի 5-ը:

ՀՀ տոների և հիշատակի օրերի մասին օրենքի 6-րդ հոդվածի համաձայն մայիսի 1-ն, համարվում է ոչ աշխատանքային օր:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 329-րդ հոդվածի համաձայն՝ Եթե ժամկետի վերջին օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվան, ապա ժամկետի ավարտի օր է համարվում դրան հաջորդող աշխատանքային օրը:

Քանի որ գնման ընթացակագի հավերով և հայտարարությամբ սահմանված հայտերի բացման նիստի օրը համընկել էր ոչ աշխատանքային օրվան, գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ քաղաքացիկան օրենսգրքի 329-րդ հոդվածի դրույթներով հայտերի բացման նիստը անցկացրեց դրան հաջորդող աշխատանքային օրը՝ 2018 թվականի մայիսի 02-ի ժամը 11:00-ին

1.2 Հայտեր ներկայացրել են հետևյալ մասնակիցները՝

Գեղամ Կիրակոսյան ՍՊԸ Հարկային կոդ 04428037, Էլեկտրոնային փոստ kirakosyan-gegham@mail.ru
Հայկ Ֆարմ ՍՊԸ Հարկային կոդ 00177957, Էլեկտրոնային փոստ hayk-pharm@mail.ru

2. Հայտ ներկայացրած մասնակիցների հայտերում ներառված փաստաթղթերի համապատասխանության և հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման մասին

2.1 Մասանակիցների ներկայացրած էլեկտրոնային հայտերը www.armeps.am համակարգի կողմից համարվել է հետագա գնահատման համար ընդունելի.

- Հայտ ներկայացրած մասնակից **Հայկ Ֆարմ ՍՊԸ-ն** հայտում ներառված փաստաթղթերը կազմել և ներկայացրել է հրավերի պահանջներին համապատասխան.
- **Գեղամ Կիրակոսյան ՍՊԸ-ն** իր հայտում ներառված փաստաթղթերը կազմել և ներկայացրել է հրավերի պահանջներին անհամապատասխան: Մասնավորապես՝

Գեղամ Կիրակոսյան ՍՊԸ-ի ներկայացրած հայտում բացակայում է բաց մրցույթին մասնակցելու դիմումը (մրցույթի հրավերի թիվ 1 Հավելված): Հաշվի առնելով հայտում տեղ գտած անհամապատասխանությունը, գնահատող հնձնաժողովը որոշեց՝ կասեցնել գնահատող հաձնաժողովի նիստը և հանձնարարել գնահատող հանձնաժովի քարտուղարին տեղեկացնել/ծանուցել **Գեղամ Կիրակոսյան ՍՊԸ-ին** տեղ գտած

...ժամապատասխանության մասին, և առաջարկել մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել դրանք ու <<Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն>> ՓԲԸ-ի էլեկտրոնային փոստի հասցեին՝ nco.gnumner@gmail.com, ուղարկել մրցույթի հրավերի թիվ 2 Հավելվածը: Հակառակ դեպքում համաձայն Կարգի 42-րդ կետի պահանջներին մասնակցի ներկայացված հայտը ենթակա է մերժման: <u>**Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել սույն պարբերությամբ սահմանված ծանուցումը ուղարկելու որվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրվա ժամը 12:00-ին**</u>

Ընդունել որոշում՝ կողմ ***5 (հինգ)***, դեմ ***0 (զրո)***

3. <u>**Հայտերի վերաբերյալ հարցումների և ներկայացրած պարզաբանումների մասին՝**</u>

3.1 Հարցումներ և պարզաբանումներ չեն եղել.

4. <u>**Ներկայացրած բողոքների և դրանց վերաբերյալ կայացրած որոշումների մասին՝**</u>

4.1 Բողոքներ չեն եղել:

5. <u>**Հակաօրինական գործողություններ հայտնաբերվելու դեպքում դրանց և այդ կապակցությամբ ձեռնարկված գործողությունների համառոտ նկարագրի մասին՝**</u>

5.1 Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել

6. <u>***Մասնակիցների ներկայացրած գների մասին (ՀՀ դրամ)***</u>

Չ/Հ	Ապրանքի				1	2	
	Անվանումը	Նկարագիրը	Չ/Մ	Քանակը	Գեղամ Կիրակոսյան ՍՊԸ	Հայկ Ցարմ ՍՊԸ	ԱԱՀ-ի մասին
1	դոքսոռուբիցին (դոքսոռուբիցինի հիդրոքլորիդ)	խտանյութ կաթիլաներարկման լուծույթի՝ 2մգ/մլ; ապակե սրվակ 5մլ	սրվակ	1700	4080000	3910000	Առանց ԱԱՀ
							ԱԱՀ-ն ներառյալ
2	դոքսոռուբիցին (դոքսոռուբիցինի հիդրոքլորիդ)	խտանյութ կաթիլաներարկման լուծույթի՝ 2մգ/մլ; ապակե սրվակ 25մլ	սրվակ	300	4230000	4050000	Առանց ԱԱՀ
							ԱԱՀ-ն ներառյալ
3	դոցետաքսել (դոցետաքսելի տրիհիդրատ)	խտանյութ կաթիլաներարկման լուծույթի՝ 20մգ/մլ; 4մլ խտանյութ ապակե սրվակում 7մլ	սրվակ	100	4725000	4716000	Առանց ԱԱՀ
							ԱԱՀ-ն ներառյալ
4	ֆտորուրացիլ	խտանյութ կաթիլաներարկման լուծույթի՝ 50մգ/մ; ապակե սրվակ 10մլ	սրվակ	1000		4400000	Առանց ԱԱՀ
							ԱԱՀ-ն ներառյալ
5	պակլիտաքսել	խտանյութ կաթիլաներարկման լուծույթի՝ 6մգ/մլ, ապակե սրվակ 16,7մլ	սրվակ	160	4560000	5000000	Առանց ԱԱՀ
							ԱԱՀ-ն ներառյալ
6	պակլիտաքսել	խտանյութ կաթիլաներարկման լուծույթի՝ 6մգ/մլ; ապակե սրվակ 25մլ	սրվակ	120	4992000		Առանց ԱԱՀ
							ԱԱՀ-ն ներառյալ

7. <u>***Մերժված հայտերի մասին***</u>

7.1 Մերժված հայտեր չկան.

Ընդունել որոշում՝ կողմ ***5 (հինգ)***, դեմ ***0 (զրո)*** ձայներով

Հանձնաժողովի նախագահ

/դեղատ. վարիչ/ ԳՊ/ԳԱՊ Ն. Գասպարյան

Հանձնաժողովի անդամներ

/հաշվապահ/ ԳՊ/ԳԱ Ն. Դավթյան

/դեղագործ/ ԳՊ/ԳԱ Ս. Անանյան

/գլխ. հաշվապահ/ ԳՊ/ԲԱ Շ.Անանյան

/դեղագործ/ԳՊ/ԲԱ Ա. Դանիելյան

Հանձնաժողովի քարտուղար՝

ԳՊ/Միմ Հարություն Օհանյան